

Գեր. Տ. Շահէ Արք. Աճէմեան
1926-2005

digitised by A.R.A.R.@

Ի Տէր հանգեաւ Գեր. Տ. Շահէ Արքեպս. Անեմեանը

Խոր ցաւով տեղեկացնում ենք, որ Յուլիսի 13-ին, կեանքի 79-րդ տարում երկարատեւ ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագոյն միաբան, Երեւանի Պետական Համալսարանի Աստուածաբանութեան ֆակուլտետի դեկան Գեր. Տ. Շահէ Արքեպս. Անեմեանը:

Գեր. Տ. Շահէ Արքեպս. Անեմեանը ծնուել է Հալէպ քաղաքում 1926թ.: Նախնական կրթութիւնն ստացել է տեղի Հայկազեան վարժարանում եւ այնուհետեւ, 1937-39 թ.թ., Մխիթարեան հայրերի վարժարանում:

1939-43 թ.թ. յաճախել է Հալէպի ֆրերների դպրոցը, որի ընթացքը փայլուն յաջողութեամբ աւարտելով, նոյն տարին ընդունուել է Անթիլիասի դպրեվանքը եւ ձեռնադրուել սարկաւագ:

Աւարտելով դպրեվանքի ընծայարանի լսարանական բաժինը՝ 1947թ. կուսակրօն քահանայ է ձեռնադրուել հոգելոյս Տ. Դերենիկ Եպս. Փոլատեանի ձեռամբ:

1947-50 թ.թ. հետեւել է Բրիւսելի համալսարանի գրականութեան եւ փիլիսոփայութեան դասընթացներին եւ աւարտել է՝ ստանալով գրականութեան եւ փիլիսոփայութեան պրակալորի աստիճան:

Այնուհետեւ ձեռնահասօրէն դասաւանդել է Անթիլիասի դպրեվանքում եւ Բեյրութի Յովակիմեան-Մանուկեան միջնակարգ դպրոցում, իսկ 1952-56 թ.թ.՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի դիւանապետութիւնը:

1965-1982 թ.թ. եղել է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան անդամ, ուր վարել է դիւանապետի եւ կալուածոց տեսչի պաշտօնները: Երկար տարիներ եղել է նաեւ Սուրբ Աթոռի նուիրակը Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան հանգանակութեան գործում:

Գեր. Տ. Շահէ Արքեպս. Անեմեանը աշխատակցել է նաեւ «Սիոն» ամսագրին կրօնագիտական եւ պատմափիլիսոփայական արժեքաւոր ուսումնասիրութիւններով:

1965 թ. Նոյեմբերի 7-ին եպիսկոպոս է ձեռնադրում Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ:

Աստուածաշնչի հայկական թարգմանութեան եւ կանոնի ուսումնասիրման նպատակով՝ 1982 թ. Երուսաղէմում հիմնում է Զիթենեաց լեռան Հայ Աստուածաշնչի կենտրոնը:

1975-85 թ.թ. լինելով Գերագոյն Հոգեւոր խորհրդի անդամ գործուն մասնակցութիւն է ունեցել Հայոց Եկեղեցու, Մայր Աթոռի եկեղեցա-կազմակերպչական, քարոզչական գործունէութեանը, ինչպէս նաեւ դասախօսութիւններով հանդէս է եկել Գէորգեան հոգեւոր ճեմարանում եւ Վազգէնեան դպրանոցում, նպաստել Հայոց Եկեղեցու միջազգային կապերի ընդլայնմանն ու ամրապնդմանը:

1994թ. Շահէ Արքեպս. Անեմեանը տեղափոխուել է Հայրենիք, ուր 1995 թ. Երեւանի Պետական Համալսարանի կազմում կեանքի է կոչել աստուածաբանութեան ֆակուլտետը՝ հիմնելով եւ «Անեմեան մատենաշարը»:

digitised by A.R.A.R.@

Շահէ Սրբազանը յայտնի է իր գիտական-մանկավարժական գործունէութեամբ եւ հեղինակ է մի շարք աշխատութիւնների եւ յօդուածների:

Բազմավաստակ Սրբազան Հօր մահը մեծ կորուստ է Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ Երեւանի Պետական Համալսարանի համար:

13 Յուլիս 2005 թ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարարութիւն
Երեւանի Պետական Համալսարան

Հանգուցեալ Տ. Շահէ Արքեպս. Աճեմեանի մարմինը յուլիսի 17-ին դրուել է Սբ. Գայանէ վանքում, ուր ժամը 19.00-ին կատարուել է եկեղեցու կարգը:

Յուլիսի 18-ին, ժամը 10.00-ին, Սբ. Գայանէ վանքում մատուցուել է Սբ. Պատարագ, յընթացս որի կատարուել է հանգուցեալ Սրբազանի վերջին օծման եւ թաղման արարողութիւնները:

Սրբազան Հօր աճիւնը ամփոփուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Միաբանական գերեզմանատունը»:

Նորին Ս. Օծութիւն
Տ. Տ. Գարեգին Բ.
Կաթողիկոս Ամենայն Հայոց
Սուրբ Էջմիածին

Վեհափառ Տէր,

Վեհիդ 13 Յուլիս թուակիր նամակէն ցաւով տեղեկացանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միաբանութեան տարէց անդամներէն Գեր. Տ. Շահէ Արքեպս. Աճեմեանի վախճանման մասին: Երկարատեւ իր ֆիզիքական հիւանդութենէն առաջ, որպէս Միաբան Մայր Աթոռոյ, Շահէ Սրբազան իր օգտակար ծառայութիւնը եւ տնտեսութիւնը ներդրեց թէ՛ Մայր Աթոռոյ հաստատութեանց ի նպաստ, եւ թէ՛ Պետական Համալսարանի մէջ աստուածաբանական դասընթացքներ հաստատելու կապակցութեամբ:

Մեր եւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան մաղթանքն է, որ Տէրը ընդունի հոգին հանգուցեալ իր ծառային, եւ Հայց. Եկեղեցոյ անդաստատնին համար կոչէ եւ ընտրէ նուիրեալ մշակներ, Իր փառքին եւ Հայ ժողովուրդի կաւակներու հոգեոնդոն աճումին համար:

Կ'աղօթենք որ Տէրը Վեհիդ պարգեւէ անպակաս առողջութիւն հոգիի եւ մարմնի:

Մատչիմք Վեհիդ Օծեալ Աջոյն
Խոնարհաբար

Թորգոմ Արքեպս. Մանուկեան
Հայ Պատրիարք Երուսաղէմի

digitised by A.R.A.R.@